Հրատարակվում է չորեքշաբթի, ուրբաթ և կիւրակի օրերը։
Տարեկան գինն է 10 ռուբլի, կէս տարուանը 6 ռ. 3 ամսուանը 3 ռ. և մի ամսուանը 1 ռ.։ Առանձին համարը 7 կոպէկ։
Բաժանորդագրութիւնն ընդունվում է խմբագրատանը և «Կենդրոնական գրավաճառանոցում»։
Հասցէն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". կամ՝ Tiflis, Rédaction „Ardzagang".

ԱՐՁԱԳԱՆՔ

Խմբագրութիւնը բաց է ամեն օր 10—1 ժամ (բացի կիւրակի և տօն օրերից)։
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ

ԱՐՁԱԳԱՆՔ
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
(ՏԱՍՆԵՒՎԵՑԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
Բաժանորդագրութիւնն ընդունվում է ԽՄԲԱԳՐԱՏԱՆԸ (Վելեամինովսկի փողոց, № 22, տուն Խանդամիրեանի) և «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ»։
ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է ԹԷ ՌՈՒՍԱՍՏԱՆՈՒՄ ԵՒ ԹԷ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 10 ՌՈՒԲԼԻ, 6 ԱՄՍՈՎ 6 ՌՈՒԲԼԻ, 1 ԱՄՍՈՎ 1 ՌՈՒԲԼԻ
Օտարաքաղաքացիք պէտք է դիմեն՝ Тифлисъ. Редакція „Ардзаганкъ". իսկ արտասահմանից՝ Tiflis, Rédaction du journal arménien „Ardzagang"
Յայտարարութիւններ ընդունվում են հայերէն եւ օտար լեզուներով։

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
հաստատուած ապահովագրական
„ԵԱԿՈՐ"
Ընկերութեան Վարչութիւնը հրատարակում է ի գիտութիւն ընդհանրութեան թէ, որովհետև պ. Ֆ. Ա. ԻՎԱՆՈՎ հիւանդութեան պատճառով հրաժարուել է ընկերութեան Թիֆլիսի գլխաւոր գործակալութեան պաշտօնից, ուստի Թիֆլիզում գլխաւոր գործակալ է նշանակվում ԱԼԵՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԻԵՎԻՉ ՍԵՐԳԷԵՎ։ Գլխաւոր գործակալութեան գրասենեակը գտնվում է Երևանեան հրապարակում, տուն իշխան Ցիցիանովի, № 2.
«ԵԱԿՈՐ» Ընկերութեան ընդհանուր վերատեսուչ—Ի. ԿՈՐԷՑԿԻ. (8—7)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին դէպքերը Թիւրքիայում։
ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.—Կովկասեան կառավարչապետ։ Պետ. կալ. և երկրագ. նախարարը։ Աբասթումանից։ Բաթումից։ Զուչուց։ Գիւղատնտեսական-տեխնիքական դպրոցներ։ Կերոսինի առևտուրը։ Անդրկասպեան երկիրը։ Կարկտի պատճառած վնասը։ Քաղաքի գրադարան ընթերցարանները։ Դուշեթից։ Օձունից։ Չիբաքլի այս տարուայ հունձը։ Այգեհասից։ Ստանահից։ Բագուի իրաւասուների ընտրութիւնը։ Զօրագիւղից։ Նամակ Դիլիջանից (աւազակների յարձակումը)։ Նամակ Իգդիրից։ Կ. Պոլսի Թերթերից։ Քոյր և եղբայր։
ՖԵԼԻԵՏՕՆ.—Ժիւլիէ Կուրտելլէմոնի ճանապարհորդութիւնը դէպի Մեքքա։
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Անուղղակի գոհ մալ։
ՔԱՂԱՔԱԿԱՆ
ՏԵՂԵԿԱՏՈՒ
ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎԵՐՋԻՆ ԴԷՊՔԵՐԸ ԹԻՒՐՔԻԱՅՈՒՄ

—

ՄԱՀՈՒԱՆ ՊԱՏԺ

Օգոստոսի 9-ին Կ. Պոլսոյ հին կամուրջի վրայ, որ անցնում է Ոսկեղջիւրի վրայով, կախեցին օգոստոսի 6-ին գինամիտով սպանութեան փորձ կատարողներին։ Լուրեր կան թէ այդ տեսակ նոր փորձեր են կատարվում կրկին։ Ասում են որ օգոստոսի 11-ին կալանաւորուած են կրկին երկու հոգի, որոնք ցանկանում էին ռումբ ձգել Պերայի մեծ փողոցում, նրանց երրորդ ընկերը ոստիկանութեան հետ ընդհարում ունեցած ժամանակ անձնասպան եղաւ։ Ենթադրում են նոյնպէս—գրում է «Ռուսսկ. Վեդ.» թղթակիցը—որ վերջին փորձերի հեղինակները հայեր չեն, այլ «Երիտասարդ Թիւրքիա» ընկերութեան անդամները։ Այդ ճշմարտանման է։ Հայերի աչքն այնպէս վախեցած է և նրանք այնքան քիչ են Կ. Պօլսում, որ դժուար է հաւատալ թէ նոր փորձեր կանեն։ Ընդհակառակն երիտասարդ թիւրքերի մէջ վերջին պատերազմը մեծ խլրտումներ է առաջացրել։ Միայն օսմանեան բանկում եղած փորձի յանցաւորի մասին կարելի է հաստատ ասել որ հայ է, նա բռնուել է շնորհիւ իւր հայկական արտասանութեան։ Մինչև յանցանք գործելը, նախօրօք, նա մի քանի օր մեծանոց վրայ յաճախում էր բանկ, գրաւ էր յանձնում և չէկով յետ ստանում, որպէսզի ուսումնասիրէ տեղը և ծառայողների աչքը վարժեցնէ իւր այցելութիւններին։ Փորձի օրը գրեթէ բոլորովին մանկահասակ կավաս Մարկօն երբ առանց որևէ յետին մտքի նրան հարցրաւ թէ ինչու համար է եկել, նա գոգաց, շփոթուեց և հազիւ կարողացաւ արտասանել «փարա խուզուրում» (դրամ եմ ուզում), մնացած հարցումներին եկւորն անկարող եղաւ պատասխանել, այլ միայն բերնում վառուող երկայն սիգարով աշխատում էր վառել իւր վերարկուի տակ եղած ռումբի պատրոյգը։

—

ԱՆԿԱՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԿՈՏՈՐԱԾ ՀԵՐԱԿԼԷՈՒՄ (ՓՈՔՐ-ԱՍԻԱ)

Կ. Պօլսից գրում են «Ռուսկ. Վեդ.»-ին.—«Փոքր-Ասիայում տեղի ունեցաւ մի դէպք, որի պատճառով քիչ մնաց որ Չերնօգօրիայի ներկայացուցիչը դուրս գնայ Կ. Պօլսից։ Հերակլէի շրջակայքում (Կ. Պօլսից 12 ժամ հեռաւորութեան վրայ, Սև ծովի ասիական ափում) Զադուլակէ գիւղի մօտ գտնվում է ֆրանսիական մի ընկերութեան քարահանքը, այդտեղ բանում են 350 հոգի և թւում նրանց և 100 չերնօգօրցիներ։ Շրջակայքում բնակվում են բազմաթիւ քրդեր։ Մի չերնօգօրցի, աշխատանքների ընդհատման միջոցին, մօտեցաւ աղբիւրին և ցանկացաւ ջուր խմել։ Աղբիւրի մօտ կանգնած էին բազմաթիւ քրդեր, երբ չէրնօգօրցին վերցրաւ թիթեղեայ բաժակը որ ջուր խմէ, մի քուրդ նրան հրեց ասելով, թէ անհաւատ շունը չէ կարող այստեղ ջուր խմել։ Կռիւ սկսուեց, որի ժամանակ քրդերից մէկը հանեց դաշոյնը և վիրաւորեց չէրնօգօրցու թոքը։ Այն ժամանակ չէրնօգօրցիք վազեցին իրանց հայրենակցի օգնութեան և ընդհանուր կռիւ սկսուեց, որի ժամանակ չորս քուրդ վիրաւորուեցին և մէկն սպանուեց։ Վարչութեան կարգադրութեամբ չէրնօգօրցիներին իսկոյն շոգենաւ նստեցրին և ուղարկեցին Կ. Պօլիս իսկ քրդերն սկսեցին կողոպտել գիւղի քրիստոնեաների տները։ Քրդերի անկարգութիւնը վերջացաւ երբ հասան Հերակլէից կանչուած զօրքերը։ Երբ չէրնօգօրցիներին բերող շոգենաւը Կ. Պօլիս հասաւ, թուրք վարչութիւնը կարգադրեց չէրնօգօրցիներից կռուի ղեկավարներին բանտ նստեցնել, իսկ միւսներին հայրենիք աքսորել։ Բայց Չէրնօգօրիայի դիպլոմատիքական գործակալը պահանջեց որ իսկոյն ազատեն բանտարկուածներին և վերադարձնեն իրանց աշխատանքի տեղը։ Շնորհիւ նրա եռանդուն բողոքներին բոլոր բանտարկեալներն ազատուեցին, բացի մէկից, որի դէմ ապացոյցներ կան թէ քուրդ է սպանել։ Չէրնօգօրցիք նորից նաւ նստեցին և գնացին իրանց աշխատանքի տեղը։

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կովկասեան կառավարչապետ իշխան Գոլիցին ամսոյս 24-ին, երեկոյեան, Թիֆլիսից ուղևորուեց դէպի Ղարսի նահանգը։

* *

Պետական կալուածների և երկրագործական նախարար Ա. Ս. Երմոլով ամսոյս 24-ին ուղևորուեց դէպ Հաշտարխան, որտեղից կըգայ Կովկաս։

* *

ԱԲԱՍԹՈՒՄԱՆԻՑ մեզ հեռագրում են օգոստոսի 24-ից. «այսօր առաջին հասարակութեան ներկայութեամբ, մեծ հանդիսով օծեց հայոց եկեղեցւոյ հիմքը Գէորգ արքեպիսկոպոս Սուրենեան Քութայիսի և Ախալցխայի հոգևորականութեան պաշտօնակցութեամբ։ Եկեղեցին կառուցանվում է ամբողջապէս եղբարց Յակովբ և Յովակիմ Ազամեանների առևտրական տան հաշուով։

* *

ԲԱԹՈՒՄԻՑ մեզ գրում են, որ այս օրերս Մախինջաուրի կոչուած ամառանոցում կատարուել է մի զգալի եղեռնագործութիւն։ Տրապիզոնցի յայտնի առևտրական Չիլինգարեանի որդին ենթարկուել է գազանային տանջանքի։ Ամբողջ հասարակութիւնը վրդովուած է այդ սոսկալի չարագործութիւնից, որ նայելով լուրերին կատարուած է իբրև վրէժխնդրութիւն նրա հայ ծնողների դէմ։ Ամենքը սպասում են դատարանական քննութեան։

* *

«Նով. Վր.» հաղորդում է թէ Կովկասեան կրթական իշխանութեան միջնորդութեամբ, առաջիկայ ուսումնական տարուան սկզբից Կովկասի զանազան կէտերում կըբացուին ստորին գիւղատնտեսական և տեխնիքական դպրոցներ։

Ինչպէս երևում է այդ միջնորդութիւնը վերաբերում է Հիւսիսային Կովկասին, ուր արդէն բացուել են մի քանի ստորին գիւղատնտեսական դպրոցներ, իսկ մեր երկրում նրանց հետքը դեռ չկայ։

* *

Կերոսինի առևտուրը կրկին բուկսում է ընկնել, «Չերն. Վեստն.» հաղորդում է թէ կերոսինի գները այնքան ընկել են և ֆրախտն այնքան թանկացել է որ գործարանատէրերը և արտահանողները մեծ վնասների են ենթարկվում և այդ հանգամանքը շատ վատ է ազդում Բաթումի առևտրական գործերի վրայ։ Արտասահմանից ռուսական կերոսինի նոր պահանջներ գրեթէ ամենևին չեն լինում։

* *

Ինչպէս երևում է Անդրկասպեան երկիրը շուտով գործարանական նշանաւոր կենտրոն պիտի դառնայ։ Մայրաքաղաքի Թերթերը հաղորդում են որ շուտով Ասխաբադից ոչ հեռու պիտի կառուցուի պղպատէ ահագին ձուլարան, ուր պիտի աշխատեն 6 հազար գործաւորներ։ Գործարանը բանում է անգլօ-բելգիական մի ընկերութիւն, որ 2,800,000 դրամագլուխ է դնում։

* *

Թելաւի շրջականներում եկած կարկուտի պատճառած վնասը, ինչպէս երևում է յատուկ յանձնաժողովի զեկուցումից, հասնում է մինչև 20 հազար ռուբլի գումարի։

* *

Թիֆլիզի պ. նահանգապետը առաջարկել է Թիֆլիզի տպարանների, վիմագրատների ու գրավաճառանոցների կառավարչական վերատեսչին տեղեկութիւններ հաղորդել թէ քաղաքում քանի՞ գրադարան - ընթերցարաններ կան, վճարով և ձրի։

* *

«Կասպի» լրագիրը հաղորդում է. որ Բագուի քաղաքային իրաւասուների ընտրութիւնները նշանակուած են սեպտեմբերի 14-ին։

Լուր կայ որ նաւթարդիւնաբերողների միջնորդութիւնը՝ Բագվում լեռնային դպրոց բանալու վերաբերմամբ՝ շուտով կըներկայացուի պետական խորհրդի քննութեան։

* *

Սեպտեմբերի 1-ին, երկուշաբթի, կըկայանայ քաղաքային Նորընտիր իրաւասուների առաջին նիստը։ Նիստից առաջ իրաւասուներին կ'երդուեցնեն։ Հետևեալ նիստը տեղի կունենայ սեպտեմբերի 13 ին։ Նոր քաղաքային խորհուրդն ի միջի այլոց պիտի ընտրէ քաղաքագլուխ, վարչութեան մի անդամ, քարտուղար և դպրոցական խորհրդի անդամներ։

* *

ԴՈՒՇԵՂԻՑ (Լօռի) մեզ գրում են.—Մարձայ վանքապատկան հողերի վրայ կան Աթան, Շամուտ և Ահնիդօր հայաբնակ գիւղերը, որոնք Լօռւայ և Ղազախի լեռնասահմաններն են կազմում. որոնց մօտիկ են բնակվում և «Նաջաբլար» կոչուած օբայի Թուրքերը, որոնք արիւնածարաւ գող աւազակներ են. ամենաշատ գողութիւնները դրանք են անում, մարդասպանութիւնն էլ դրանց ազնիւ (?!) փէշակն է. սրանք և թէ վերև յիշած գիւղերը, որովհետև կասկածի տակ են, թէ գող աւազակներ են պահում, վաղուցայ դրանց մէջ էկզեկուցիա է դրուած կառավարութեան կողմից, այն սպառնալիքով, որ դրանք իրանց յանձնեն յայտնի գողերին, ստորագրութիւն տալով, որ ամեն մի պատահարի պատասխանատու իրանք են։

Դուշեղն եւ նոյն վիճակի ենթարկուեցաւ, մանաւանդ որ խանութպաններից մէկը իմացուեցաւ, որ ծածուկ յարաբերութեան մէջ է «ղաչաղների» հետ սաբերում, կարևոր նպաստներ հասուցանելով. սա արդէն ձերբակալուած է։

Բորչալուի գաւառապետ պ. Սումբատովի հեռանալովն, պաշտօնանկ եղաւ և մեր պրիստաւը (Լօռւայ)։ Այժմեան նոր պրիստաւը մեծ եռանդ է ցոյց տալիս դէպի իւր պաշտօնը։

* *

ՕՁՈՒՆԻՑ (Լօռի) մեզ գրում են։ Ամսոյս 10-ն այստեղ պատահեցաւ մի ցաւալի դժբախտութիւն։ Ծխամորճի պէծից կրակ ընկաւ Տէր-Մէլիքսէդեկեանցի կալի դէզերը, որոնք իրանց մէջ պարունակում էին մօտաւորապէս 7000 խուրձ։ Ցաւալի էր տեսնել, թէ ինչպէս կրակի սկզբնապատճառ եղող հայրը քանիցս անգամ իրան կրակի մէջ է շպրտել այրուելու, բայց մօտիկ եղողները արգելք են եղել։ Այս ցաւալի դժբախտութեան հավութիւն պատճառեցին մեր և

ՖԵԼԻԵՏՕՆ

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԴԷՊԻ ՄԵՔՔԱ

(Ժիւլիէ Կուրտելլէմոնի)

Եւրոպացիների աւելի և աւելի ընդարձակուող և զօրացող ազդեցութեան շնորհիւ ներկայ ԺԹ դարիս վերջին կիսում արկածախնդիրների և քննիչների առաջ բացուեցան Արևելքի այնպիսի երկիրներ, որոնք փոքր ժամանակ առաջ անմատչելի էին օտարների համար։ Մեր աչքի առաջ Վամբերին, մահուան վտանգով, մոլլայի տարազով մտաւ Բուխարա, Խիվա և Սմրղանդ, ուր անցնում են այժմ ռուսական երկաթուղիք և կառավարում են ռուս պաշտօնեաները։ Անգլիացիք բացին իրանց համար ազատ ճանապարհ դէպի Աւղանստան և պահպանում են նրան այլ եւրոպացիներից, գլխաւորապէս ռուսներից, քաղաքական և առևտրական նպատակներով։ Չինաստանը տարէց տարի աւելի լայն բանալու ստիպուած է իւր դռները «սպիտակադէմ բարբարոսներին» առաջ։ Ճափանիան կամաւ ամբողջութեամբ դարձաւ եւրոպացիներին մատչելի։ Սիամ և Հաբէշստանը դադարեցան խորհրդաւոր երկիրներ լինելուց, ինչպէս Տոմբուկտուն և ամբողջ Աֆրիկէն, որ զարմանալի արագութեամբ դառնում են եւրոպական պետութեանց ենթարկուող երկիրներ։ Ներկայումս իրանց կատարեալ անմատչելիութիւնը օտարների համար յամառութեամբ պահպանում է միայն Տիբէտի հլասսա սրբազան քաղաքն և մահմեդականութեան Մեքքա և Մեդինա սուրբ քաղաքները թոյլ չեն տալիս իրանց սահմանը մտնել օտարազաւաններին։ Մահմեդական ուխտաւորներն, որոնք լինում են այդ քաղաքներում, հարկաւոր չեն համարում հաղորդել անհաւատներին իրանց տեղեկութիւններն ու տպաւորութիւնները։ Այն մոլլաներն ու հաջիք, որոնք եղած են Արաբիայում և որոնց հետ ես խօսք էի բանում Մեքքայի ու Մեդինայի մասին, իմ ճանապարհորդութեանցս ժամանակ Արևելքում և Ռուսաստանում, բաւականանում էին կամ ընդհանուր նախադասութիւններով և կամ անում էին անհեթեթ պատմութիւններ իրանց տեսած հրաշքների մասին, շատ ման էլ ստախօսում էին, իրանց տգիտութեամբ, ինչպէս երևում է և ֆրանսիացի ճանապարհորդ Ժիւլիէ Կուրտելլեմոնի գրքից։ Նրանից վաթսուն տարի առաջ նոյն քաղաքներին այցելեց նոյնպէս ֆրանսիացի Լէօն Ռօշը։ Բայց նրա մահմեդական սուրբ տեղերի նկարագրութեան հետ ես ծանօթ չեմ և չգիտեմ էլ, կայ արդեօք այդպիսի նկարագրութիւն։ Եթէ նա գոյութիւն էլ ունի, արդէն կէս դար անցած լինելով, անշուշտ հնացած կըլինի։ Ինքս հետաքրքրուելով Արևելքով, հարկաւոր համարեցի ռուս ընթերցող հասարակութեան պ. Ժիւլիէ Կուրտելլեմոնի Mon voyage à la Mecque գրքից հաղորդել այն, ինչ որ ըստ իս հետաքրքրական է *)։

Ժիւլիէ Կուրտելլեմոնն, որ քաջ ծանօթ է մահմեդական արևելքին, երկար ժամանակ Ալժիրում ապրելով՝ տեղացի արաբների մէջ ունէր մի քանի հաւատարիմ բարեկամներ, և սրանց խորհրդով ու ստիպմամբ վճռեց ընդունել մահմեդականութիւն, որպէս զի, որքան հնար էր, առաջն առնէր այն մեծ վտանգների, որոնք սպառնում է մահմեդական մոլեռանդութիւնը ամեն օտարականի, որ կըյանդգնէր մերձենալ մարգարէի (Մահմեդի) հայրենիքին։ Ճանապարհորդն ընդունեց մահմեդականութիւն ըստ Մալիքիների աղանդի, որ շատ տարածուած է Ալժիրում, և կեղծ անունով անցաթուղթ առած ճանապարհ ընկաւ, ընկերակցութեամբ իւր հաւատարիմ բարեկամ հաջի Ակիլի, որ ջերմեռանդ մահմեդական էր, արդէն քսան անգամ Մեքքան այցելած ու հաւատացած էր Ժիւլիէի անկեղծութեամբ մահմեդականութիւնն ընդունելուն։ Ոչ մի կասկածի տեղիք չտալու համար ճանապարհորդներն ընկերացան տախտակամածի վրայ գտնուող ճանապարհորդներին մի ֆրանսիական նաւի, որ տանում էր բազմաթիւ ուխտաւորներ Ջիդդա, Մեքքային ամենամօտիկ նաւահանգիստը Կարմիր ծովի ափին։ Զանազան չնախատեսուած հանգամանքների պատճառով նրանք չկարողացան միանալ հետաքրքրական կարաւանին, որի հետ ամեն տարի Կահիրէից ուղարկվում է «սրբազան գորգը» (մախամալ) նուէր մարգարէի գերեզմանին։ Դրանով ճանապարհորդութիւն մի քանի հարիւր մահմեդական ուխտաւորների հետ չորս տարի առաջ յաջողեցաւ անելու, և Կահիրէում կարող եղաւ ականատես լինելու սրբազան գորգի Մեքքա ուղարկելու հրօք փառաւոր հանդէսին։ Որքան հնար էր առաջին դասի ճանապարհորդիս գրեթէ մի շաբաթուան ընթացքում դիտում էի ուղղափառների (մահմեդականների) կենցաղավարութիւնը շոգենաւի վրայ և կարող եմ հաստատել, որ փոքր ի շատէ կենաքի յարմարութեանց վարժուած մարդը պէտք է կամքի մեծ ոյժ ունենայ, որ տանի անտրտունջ բոլոր ծանրութիւնն այն կարգի, որ պարտաւորական է ամեն ուխտաւոր մահմեդականի համար նրանց կրօնական կանոններով, որոնք արգելում են ուտել գեաւուրների (անհաւատների) պատրաստած կերակուրը։ Միջերկրական և Կարմիր ծովերի չոր կլիմայում հետը առած պաշարները շուտ փչանում են և շրանում։ Բացի դրանից սովորութիւնը պահանջում է, առանց մերժելու բաժին հանել ճաշի և թէյ խմելու ժամանակ ամեն մերձեցողին. ուստի և ոչ առանձին սենեակներում ապրող ուխտաւորները մեծ մասամբ շուտով ստիպուած են գրեթէ սովամահ լինելու, բաւականանալով լոկ թէյով ու պաքսիմատով։ Այս պատճառով էլ հէնց տախտակամածի վրայ միայն կարելի է ծանօթանալ մահմեդական աշխարհի առանձնութեանց, որ գըժուար է հեռուից և կայուտներում բնակողների բարձրութիւնից։ Ինչպէս պարզուեցաւ ինձ համար իմ ճանապարհորդութեանս ժամանակ Միջերկրական և Կարմիր ծովերում Շիի-պարսիկների և Սիւննի—Թուրքերի անհաշտ թշնամութիւնն, աւելի ես մեծ չափով և որոշ կերպով նկատում է ֆրանսիացի ճանապարհորդը արմատացած ցեղական ատելութիւնը Թուրքերի և բնիկ արաբացիների մէջ։ Ի նկատի առնելով այն, ինչ որ ես տեսայ և ինչ որ պատմում է պ. Ժիւլիէ Կուրտելլեմոնը, կարելի է ասել, որ «մահմեդական աշխարհը» բնաւ այնպիսի հաւաքական և ձուլուած միութիւն չէ կազմում, որպէս նրան երբեմն ներկայացնում են, իբրև վտանգաւոր մինչև անգամ եւրոպական քաղաքակրթութեան համար։ Բացի Սուդանի, վերին Նեղոսի և միջին Աֆրիկէի անկախ ցեղերից և նրանց անհնազանդ պետութիւնից, նոյն իսկ Արաբիայում կան փոքրիկ իշխաններ, որոնք չեն ճանաչում սուլթանի իշխանութիւնը, թշնամի են Թուրքերին, մեծ ժողովրդականութիւն, հեղինակութիւն և սէր են վայելում Արաբիայի թէ նստակեաց և թէ վրանաբնակ ցեղերի կողմից։ Այսպիսի իշխանների մէջ, ինչպէս երևում է, առաջին տեղն ունի Նեջիդի իշխող Բէն-Ռաշիդն, որ յայտնի է ամենաբնտիր արաբական ձիերով ամբողջ աշխարհում։

Հէնց առաջին քայլում Ջիդդայում երևեցաւ, որ համարձակ ֆրանսիացի ճանապարհորդի նախազգուշութիւններն աւելորդ չէին։ Կասկած տարան որ նա օտարազգի է և կալանաւորեցին։ Հաջի Ակիլին, ազատեց նրան բայց չկարողացաւ ցրել հէնց իւր բարեկամ արաբացիների կասկածներն ու անվստահութիւնն, որ առաջ էր գալիս Ժիւլիէի արտաքին կերպարանքից և շարժուածներից և մանաւանդ, որ նա չգիտէր իրան իսկ արաբի վայել ձևով պահել սեղանի ժամանակ։ Տեղական բնիկներից մէկը մինչև անգամ հա

*) Բացի յիշեալ երկու ֆրանսիացիներից Մեքքայում եղած են՝ զուիցերացի Բուրքհարդը 1814 թ. անգլիացի Բուրտոնը 1853 թ. հոլանդացի Snouck Hurgronge, սպանիացի Badia, դօկտոր Morsly, van Maltzan և Wallin.

թէ շրջակայ հայ գիւղացիք, որոնք, պէտք է խոստովանած, առատօրէն սկսեցին խրձեր հաւաքել և տալ նուէր թշուառացեալներին։ Ամսոյս 18 ին էլ մեր գիւղին սահմանակից բնակող ազնուական յայտնի Ք. Ճիօվ անցնելիս, ծըխամորճի պէծն վայր ընկաւ մէկ թշուառ Օձնեցու կալի մօտ, որից և խեղճի դէզերը կրակ ընկան։ Լսւում է, որ այս վնասուածի համար ևս գիւղացիք մտադիր են խրձներ հաւաքել և օգնութեան հասնել, ինչպէս որ արել են միշտ։ Ցանկալի կլինի, որպէսզի թշուառութիւնները վերջացնելու նպատակաւ ծխախոտ քաշելն արգելուի այդպիսի տեղերում, մանաւանդ ամառներն. Նախազգուշութիւն կարևոր է։

* * *

ՍԱՆԱՀՆԻՑ մեզ գրում են.

Մեր հռչակաւոր վանքին պատկանած անտառը անխնայ կերպով կտրվում է. Հրաւիրում ենք հոգևոր իշխանութեան ուշադրութիւնը այս մասին։

Ապագայ երկաթուղու բացման ժամանակ հեշտ հաղորդակցութիւն ունենալու նպատակով այստեղ՝ ձորից մինչև գիւղի արտերի տափարակը՝ շինուելու է այնպիսի ճանապարհ, որ կառքերով կարելի լինի գնալ վանքն, արդէն կարևոր նախապատրաստութիւններն տեսնվում են,—նախաձեռնութեամբ վանքի. օգնելու են և՛ իշխան Երկայնաբազուկ Արղութեանները։

* * *

ՇԻՐԱԿԻ ԱՅՍ ՏԱՐՈՒԱՅ ՀՈՒՆՁԸ

Թէ քո երկիրը Չարայինն է, մեր ամբարները Շիրակինը չեն։
Խորենացին.

Մի երկրում, ուր բացի հացի արդիւնաբերութիւնից ուրիշ արդիւնաբերութիւն չկայ, և ուր ժողովուրդը սոսկ հողագործութեամբ է պարապում,—ի հարկէ այդպիսի երկրում ազգաբնակութիւնը աչքը տնկած, ուշադրութիւնը լարած սպասելու է «հունձի ելքին», հունձի հետևանքին։ Հունձից է կախուած գիւղացու «լինել չլինելը», հունձից է կախուած քաղաքացու, մանաւանդ մանր առևտրականների յաջողութիւնը, վերջապէս հունձից է կախուած և երկրի յաջողութիւնը ընդհանրապէս։ Աղէքսանդրապոլի պէս մի բազմամարդ քաղաքում, եթէ առևտրական դասակարգի մէջ «փող է ժաժ գալիս», ինչպէս տեղական մարդն ասում է, այդ «հացի» շնորհիւն է։ Եթէ երկրից դուրս առևտրական յարաբերութիւններ են տեղի ունենում, էլի «հացի» շնորհիւ է և այժմ ըստ երևոյթին՝ դրա վրայ է հիմնուած մեր երկրի անտեսական դրութիւնը։ Բայց թէ «երկրները Չարայինն են, մեր ամբարները Շիրակինը չեն», պատմական արգասաւորութիւն ունեցող հողը արդէն այն շտեմարանը չի ներկայացնում հիմա տեղացու համար և իր միջի մարդուն հազիւ ապրեցնում է։

Սրա պատճառներն այն են՝ որ Ա) ազգաբնակութիւնը տարէցտարի բազմանում է, իսկ հողի քանակութիւնը նոյնն է մնում, օրինակ՝ յիսուն տուն ունեցող գիւղը, եթէ սրանից տասնեակ տարիներ առաջ օգտվում էր՝ ասենք՝ 100 օրավար հողից, հիմայ այդ գիւղը դարձել է հարիւր յիսուն տուն և օգտվում է նոյն 100 օրավար հողից։ Բ) գիւղատնտեսական միջոցների բացակայութիւնը, որ կայանում է այն հանգամանքի մէջ, որ մեզանում—դաշտային գործի մէջ, ցանքսի մէջ կանոնաւորութիւն, համակարգութիւն չկայ, որ կոչվում է մասնագէտի բերանով—գիւղատնտեսական կամ դաշտային սիստեմ, չկան արհեստական պարարտացումն և ոռոգումն։ և Գ) որ մասամբ հետևանք է առաջին երկու հանգամանքների,—բնութեան արգելակիչների տիրապետութիւնը,—երաշտ, կարկուտ, մուկ, մորեխ, ժանգ, մլըրըուկ և այլն, որոնց առաջ Շիրակի երկրագործը ձեռքերը ծալած կանգնում է։ Եւ այդ պատճառով, ըստ երևոյթին, և «պաշտօնական թղթերի մէջ» արհեստով հողագործ կոչուած գիւղացին, շատ անգամ միայն «հողագործի» անունն է կրում, իսկ ինքը ստիպուած է տունը պահել «մշակութեամբ», «բանւորութեամբ», «երդուորութեամբ» իր հողի սահմանից դուրս։

Մասնաւորելով խօսքերս այս տարուայ հունձի մասին։ Ցանքը շատ ուշ եղաւ այս տարի, անձրևները և ցրտերը խանգարեցին.—հաշուեցէք, որ մայիսի 15 ից շատ ցանքս չեղաւ դաշտի վրայ, իսկ լեռների վրայ աւելի ուշ։ Ցանքերից յետոյ մի ժամանակ անձրև եկաւ, բայց ամառը առհասարակ անանձրև էր. շատ տեղեր, մանաւանդ լեռների վրայ, 40, նոյն իսկ 50 օր անձրևներ չեկան, որի հետևանքն այն եղաւ, որ նախ՝ խոտը պակաս եկաւ, և երկրորդ՝ մուկ առաջացաւ, որ կտրում է հացաբոյսը և չի թողնում երկարանալ ծղոտը։ Հիմայ երբ դաշտի վրայ ցորենը արդէն քաղուած է, իսկ լեռների վրայինն էլ քաղում են հետզհետէ,—Շիրակի հունձի մասին կարելի է հետևեալ դատողութիւնն անել։ Դաշտի հացը ընդհանրապէս պակաս է։ Թէև հացահատիկի բերքը (դէզն) միջակ կարելի է համարել, բայց խակական, համեմատական հունձը որ կայանում է գիւղականի անտեսական դրութեան հետ, շատ պակաս է. այսպէս՝ եթէ մի կոտր հողից անցեալ տարի ստացւել էր 20 դէզ (նշն) օրան, այս տարի նոյն կոտրից ստացվում է միջին թուով 10 դէզ, միայն այն զանազանութեամբ, որ անցեալ տարուայ մի դէզը բերում էր 8 կոտ խառն ցորեն (½ սոմար, որ կոտնի մօտ 8 փութ. գիւղացու կոտը մէկ փթից պակաս է), իսկ այս տարուայ դէզը բերում է 16 կոտ (մի սոմար) խտակ ցորեն. Նշանակում է, թէև միևնոյն կոտր հողից գիւղականը ստանում է մօտաւորապէս 10 սոմար հացահատիկ, բայց համեմատական հունձը շատ պակաս է, քանի որ 10 դէզ օրանից կրկնապատիկ պակաս դարման կստանայ գիւղացին, քան 20 դէզից։ Իսկ գիւղացու համար անասնոց կերակրի խնդիրը, «մալ» պահելու խնդիրը հէնց կենաց խնդիր է։ Եթէ աչքի առաջ ունենանք, որ անձրևների պակասութեան պատճառով խոտը պակաս եկաւ, դարմանը պակաս է, իսկ քաղաքի մէջ գալով զօրքերի համար 90,000 փթի չափ խոտի պահանջ կայ, ուրեմն պէտք է ընդունել, որ մալի կերակրի թանգութիւն պիտի լինի, և հէնց հիմայ այդպէս էլ է. խոտի սայլը գիւղում 5 ռուբլու դժուարութեամբ կանեն, քաղաքում՝ 6—7 ռուբլի, փութը 30 կոպ.—այդ օգոստոս ամսի մէջ բարձր գին կարելի է հաշուել։ Լեռների վրայ թէ հացը և թէ խոտը համեմատաբար լաւ է, միայն այդ տեղերում սարսափած է մուկը, որ հէնց հիմայ, երբ հացի ծղոտը կարող էր երկարել—կտրում է։ Շիրակի գիւղացին եթէ իր ստացած բերքից սերմացուն հանէ, մնացածը հազիւ հազ իր ընտանիքին կերակրէ. անասունների դրութիւնը կմնայ անապահով։ Ուստի ասածներիցս պէտք է եզրակացնել, որ հունձի դրութիւնն այնպէս է, որ գիւղացին չի կարող համաչափութիւն պահպանել իր անտեսութեան մէջ, այլ ստիպուած կլինի մալի գոնէ մի մասը, եթէ ոչ ամբողջը—ծախել, ի հարկէ աժան կամ ընկած գնով։ Հէնց այդ հանգամանքը, երբ հողագործը իրան համար անհրաժեշտ ապրանքը — «մալը» կամ «ինվենտարը» ծախելու է հանում—ինքն ըստ ինքեան անտեսական անյաջող հանգամանք է, որ մեզանում յաճախ է պատահում։ Առայժմս գարու սոմարը 8 ռ. է, իսկ ցորենինը 14 ռ.—ձեռնտու գներ են, բայց ոչ ձեռնտու անտեսական հանգամանք։ Բանջարանոցների մշակութիւնը Շիրակում նշանաւոր տեղ չի բռնում և առանձին կուլտուրա էլ չունի,—այսպէս թէ այնպէս՝ ազդեցութիւն չունի գիւղացու անտեսական կեանքի վերաբերմամբ։

Berberis L.

* * *

ՇՈՒՇՈՒՑ գրում են «Կավկազ» լրագրին. «Վաղարշում և սա հասարակ բոլոր Ղարաբաղում մեծ իրարանցումն է առաջացրել պարսկաստանցի աւազակների յանդուգն յարձակումը, որ նրանք կատարեցին Ջէբրայիլ գաւառում։ Պարսկաստանցի աւազակները դեռ ոչ մի անգամ (?) այսքան հեռու չէին մտած։ Սովորաբար նրանք յարձակումներ էին գործում սահմանագլխի վրայ, բայց այս անգամ նրանց ծրագիրն էր Աղդամի հարուստ շուկայի վրայ յարձակուել և միայն անյաջող դէպքը արգելք եղաւ նրանց նպատակներին։ Աւազակներն անցնելով Արաքսը և առաջ գնալով դէպի Աղդամի շուկան, պատահեցին անասունների մեծ հօտերի և գայթակղուելով պատահական որսից սկսեցին քշել այդ դէպի Պարսկաստան։ Տեղական կառավարչական տանուտէրն իմանալով այդ, լուր տուաւ պրիստաւին և ինքը երկու ընկերի և մի քանի գիւղացիների հետ հետամուտ եղաւ աւազակներին։ Սկսուեց փոխադարձ հրացանաձգութիւն և աւազակները տանուտէրի քաջ ընկերներից հինգին ծանրապէս վիրաւորեցին և շարունակեցին իրանց ճանապարհը և անպատիժ կանցնէին սահմանը, եթէ նրանց առաջը չկտրէր Ջէբրայիլի գաւառապետի օգնականը, որ իմանալով աւազակների ճանապարհը՝ թիկունքից զինուած խմբի հետ և կրակ բացաւ նրանց դէմ ու ոչ միայն խլեց աւազակների գողացած բոլոր անասունները, այլ և աւազակներից մէկին սպանեց և երկուսին վիրաւորեց։ Ասում են՝ որ աւազակները գաւառապետի օգնականին ճանաչելով, սպառնացել են նրանից վրէժ առնել։»

* * *

ԱՅԳԵՀԱՏԻՑ (Լօռի) մեզ գրում են. Թիֆլիզ-Կարսի երկաթուղու գծի վրայ մեր ձորումն ևս շինեցաւ ներքնուղի (տոնել), որն արդէն մօտ ժամանակներս ծակուեցաւ և պատրաստ է։ Այդ տոնելը գտնվում է այգիների տակ, «Կակալկուա» կոչուած հանդումն, որի ծայրը հասնում է հին հռչակաւոր Քոբայր անուանուած հայկական վանքի տակը։

* * *

ՉՈՐԱԳԻՒՂԻՑ (Լօռի) մեզ գրում են. Պատուական «Արձագանքի» խրախուսանքով մեր գիւղի եկեղեցու համար բաւականին փող, մօտաւորապէս 800 ռուբլի, հաւաքուեցաւ մեր համագիւղացի ընտրուած երեք հոգաբարձուների ձեռքով, մի երկու տարի առաջ։ Միայն ցաւալին այն է, որ մինչև այժմ եկեղեցին չէ շինուած, ուստի ցանկալի կլինի իմանալ, թէ այդ կոպէկ-կոպէկ հաւաքած փողերը ինչին են ծառայում. յուսով ենք, որ մեր նորընծայ քահանան այս մասին կ'պատասխանի։

* * *

ԱՒԱԶԱԿՆԵՐԻ ՆՈՐ ՅԱՐՁԱԿՈՒՄՆԵՐ

ԴԻԼԻՋԱՆ, 24 օգոստոսի.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Կարծում էինք թէ Արագիր օղլու սպանութեամբ աւազակութիւնները կվերջանան, բայց այժմ, ընդհակառակն, վերանորոգվում են Քեարամի սխրագործութեանց օրերը։ Ամսոյս 22 ին, երեկոյեան ժամը 6—7 ին, երբ Դիլիջանից գնացող օմնիբուսը և մի այլ առանձին փոստային կառքը չորս վերստ էր մնացել որ հասնէին Սեմենովկա կայարանին, նրանց առաջը կտրեց զինուած և հեծեալ աւազակների մի խումբ և կանգնեցրեց կառքերը։

Օմնիբուսում նստած էին երևանցի մի քանի հայ վաճառականներ, իսկ փոստային կառքում Բաթումի հայ քահանայ Գեղամեանը իր երեք երեխաներով։ Աւազակները հրացանները ուղղելով ճանապարհորդների կրծքին, պահանջեցին նրանց դրամները։ Ամենից առաջ հայր Գեղամեանը տուաւ իր գրպանի բոլոր դրամները, խնդրելով խնայել մարդկանց կեանքը և արիւն չթափել։ Աւազակներն ամենայն կոպտութեամբ խլեցին ոչ միայն ուղևորների բոլոր դրամները, այլ և ժամացոյցները, մինչև անգամ մի քանիսի զգեստները։ Նրանք խօսում էին և ռուսերէն բաւական մաքուր և չարաչար ծաղրածութիւններ էին անում։ Երբ աւազակները կողոպտում էին այդ ճանապարհորդներին՝ մի այլ օմնիբուս հասաւ նոյն տեղը, որ Սեմենովկայից գնում էր դէպի Դիլիջան։ Այդ օմնիբուսի մէջ բացի մի քանի պետական պաշտօնեաներից, առևտրականներից և գիւղական աշակերտներից, գտնվում էր նաև Երևանի ոստիկանապետի ամուսինը իր մանկահասակ 13 տարեկան աղջկան հետ։ Աւազակները կանգնեցրին և այդ օմնիբուսը և սկսեցին կողոպտել բոլոր ճանապարհորդներին։ Ոստիկանապետի ամուսինը սարսափահար եղած՝ արտասուքով աղաչում էր աւազակներին խնայել մարդկանց կեանքը և նա առաջինը տուաւ աւազակներին իր գրպանի բոլոր դրամները։

Աւազակները քաղաքավարութեամբ հանգստացրին տիկնոջը, ասելով, որ նրա կեանքին վտանգ չէ սպառնում, բայց ոչ միայն տիկնոջ դրամները վերցրին, այլ ճանապարհորդներից մի քանիսների զգեստները հանեցին և անպատիժ հեռացան։

Զարմանալին այն է, որ այդ կողոպուտն կատարուեց կայարանից 4 վերստ հեռաւորութեան վրայ, Ղազախի և Նոր-Բայազէտի սահմանագլխում, ոստիկանական պահականոցներից ոչ հեռու, ամենաբանուկ խճուղու վրայ, տևեց գրեթէ երկու ժամ, այդքան ժամանակամիջոցում ոչ մի պահակ ոստիկան չերևաց ոչ մէկ և ոչ միւս կողմից։ Բացի դրանից, աւազակները հասարակ գիւղացիներ չէին երևում, այլ, ինչպէս կողոպտուածներն են պատմում, գրեթէ ամենքն էլ խօսում էին ռուսերէն և նրանցից մէկը մինչև անգամ ուսադիրներ ունէր, այնպէս ինչպէս ունեն պահակ ոստիկանները։

Աւելացնեմ այս էլ, որ «միջոցներ են ձեռք առել» աւազակներին հետամուտ լինելու համար։

Ճանապարհորդ.

* *

ԻԳԴԻՐ, օգոստոսի 16.
(Թղթակցութիւն «Արձագանքի»)

Նախմանաւոր երկար ու ձիգ տարիներ են ինչ Մոլլա իշխանի առաջնորդութեամբ հայերը Պարսկաստանից գաղթելով, իրանց համար բնակութեան տեղ ընտրեցին Երևանեան նահանգի զանազան մասերում, ուր բնութիւնը կլիմայական և թէ աշխարհագրական ամեն կերպ յարմարութիւն էր ստեղծել։ Իգդիրին, որպէս հողագործ ժողովրդի, ընտրեց Սուրմալուայ գաւառի հարթ ու տափարակ դաշտը. այնտեղ բնութիւնը սրանչելի էր, հողը արգաւանդ, բայց խոպան անմշակ դրութեան մէջ էր գտնվում։ Նրա բնական սահմաններն անգամ իրանց բազդերի հրապոյրն ունէին, որի հիւսիս-արևելից, ինչպէս ուղղահայեաց գիծ, Արաքսի կոհակաձև ալիքներն էին ողողում, իսկ միւս կողմից Մասիսի ձիւնապատ գագաթն էր խոյանում ամպերից բարձր, ներհրաշին անհունութեան մէջ և իր շրջապատող մեծ ու փոքր լեռնագագաթներով ամբողջ գաւառին եռանկեան ձև էր տալիս։

Տեղի դրութիւնը և կլիմայական յաջող պայմանները շուտով որոշեցին գաղթականների պարապմունքն, հողագործութիւնը իրանց պարապմունքի վրայ կնքեց իր դրօշմը, խաղաղ և աշխատասէր հայը կազդուրվեց, պատրաստեց իր թարմ ույժերը, և Աստուծոյ անունը տալով, ձեռնարկեց իր սուրբ գործին՝ հողային մշակութեանը։ Անցնելով մի երկու տասնեակ տարիներ, ամբողջ գաւառը ծածկուեց ամեն տեսակ ծառերով ու հացաբոյսերով, հիւրընկալ Արաքսը իր առատ և պայծառ ջուրը չէր խնայում նրանց ոռոգելու, իսկ վեհափառ Մասիսը երկնքի բարձրութիւնից ամպեր էր ուղարկում նրանց ցօղելու։ Այժմ նա մի զարմանալի դրախտ է ներկայացնում և ճանապարհորդների ուշադրութեան արժանի մի բարեկից օվասիս։

Սուրմալուայ գաւառում հայերը միայնակ չէին ապրում, նրանց հետ, որպէս հարևաններ, ի բնէ գտնվում էին թուրք և քուրդ ժողովուրդը, որոնցից առաջինը՝ իր արևելեան սովորական կանգառութեամբ այնպիսի առատ և արդիւնաբեր հողերին տիրապետելով՝ ակամայ հպատակ էր հողագործ լինելու, իսկ եզիդի քուրդը լեռնային բարձրութիւնների վրայ, որպէս սարերի հարազատ որդի, հովուական ազատ և պարզ կեանքի սիրոյ բաղդրութեամբ զմայլած, իր միակ պարապմունքը նուիրել էր խաշնարածութեան արհեստին։

Սուրմալուայ գաւառում հողերի մեծագոյն մասը թուրք բէգերի սեփականութիւնն էր կազմում, նոյն իսկ պարսից տիրապետութեան ժամանակներից, բայց հետզհետէ աղքատանալով ծախեցին իրանց սեփական կալուածները զանազան մասնաւոր անձերի և այժմ իրանց իրաւունքերին հողերի ամենաչնչին մասն է ենթարկվում։

Թուրք և քուրդ տարրը իրանց վայրենի, կոպիտ բնաւորութիւններով ոչ միայն ամեն ճիգ գործ էին դնում ճնշել հայերին. սպանութիւն, գողութիւն և աւազակութիւն անպակաս էին։ Եզիդի քուրդը լեռներից գլխին իր զէնքն էր սրում, պատրաստում հայ մշակի համար, իսկ թուրքը, իրան յատուկ պարագլխի սև ու մութ նախանձոտութեամբ, ձգտում էր ոչնչացնել, զրկել մշակ հողագործին իր վաստակից, իր աշխատանքի արդիւնքից։ Բայց այդ ճնշումները ու բռնութիւնները երկար չտևեցին, կառավարութիւնը շուտով [illegible] նրանց, շուտով սկսեց օրէնքի խիստ գործադրութիւնը։ Թուրք ու քուրդը այլ ևս պատրաստ հայ չգտնելով ակամայից պիտի մնային [illegible], պիտի հպատակէին սիրով օրէնքի ույժերին։ Այլ ևս յարմարաւոր առիթ էր

մոռում է նրան Մեքքա չերթալ։ Օր աւուր աւելի վտանգաւոր դարձող խօսք ու զրոյցի առաջն առնելու համար, Ժերվիէն շտապում է հեռանալ Ջիդդայից։

—

Ջիդդայից մինչև Մեքքա 87 կիլոմետր է և կարելի է ուղտով կամ իշով երթալ։ Ժերվիէ Կուրտելլմօնը ընտրեց Հիջասի դիմացկուն և սրընթաց էշն, որովհետև շրջականներում թափառում էին բեդուինների յափշտակիչ խմբեր։ Ճանապարհ ընկնելուց առաջ կատարեց սովորական լուացումն և հագաւ իրհամ։

Իրհամ—ուխտաւորի միակ հագուստը —խիստ պարտաւորական առաջին անգամ Մեքքան այցելողի համար—է մի կտոր անկար չիթ, որով ուղղափառը փաթաթում է մարմինը մէջքից մինչև ծնկները։ «Եւ ահա, պատմում է ճանապարհորդը, ես իրանս մերկ, գլուխս գերծած ու բաց, էշի վրայ հեծած ցերեկուան երկու ժամին գտնվում եմ արևադարձի կիզիչ արեգակի տակ։ Այսպիսի վիճակի մէջ շատ հեշտ է արեգակի հարուածին ենթարկուել և ես այս մասին իմ երկիւղս յայտնում իմ Հաջի Ակլինին։

—Ամեն ինչ Աստուծոյ կամքով է, ինչ ես վախենում։

Առաջին 16 կիլոմետրը ճանապարհը անցնում է աւազոտ տափարակով, իսկ յետոյ աննկատելի կերպով սկսում է բարձրանալ ու պտոյտներ է անում Հեջասի մերկ և արևակէզ բլուրների միջով։ Դարերի ընթացքում կարաւանների ոտնակոխ արած ճանապարհը բոլորովին նման է ցամաքած գետի աւազոտ դաշտին։

Այդ լայնութեան սահմաններում գիշերը գրեթէ առանց վերջնալոյսի յանկարծ է վրայ հասնում։ Այս անգամ նա անլուսին էր. Բայց Արաբիայի երկնքի բազմաթիւ աստղերն այնպէս պայծառ փայլում են, որ ճանապարհորդը կարող է նկատել իրան շրջապատող աղօտ տեսարանը. Իրարից որոշ հեռաւորութիւններում բարձրաւանդակների վրայ երևում են տաճիկ պահապանների բնակարանների ստուերագծերը, այդ բնակարաններում առկայծող լոյսերը իմաց են տալիս, որ զինուած մարդիկ յամենայն դէպս պատրաստ են։ Անդադար առաջ են դուրս գալիս կարաւաններ, երկար շարք ուղտերի, որոնք գրեթէ սահում են խոր աւազի վրայով. Նշմարվում են մարդոց կերպարանքներ, որոնց, հակառակ մահմեդական սովորութեան, ոչ որ չէ ողջունում և ոչ էլ մի քաղցր խօսք ասում։ Նրանց ստուերներն անցնում են մօտովդ, իսկ դուք շտապում էք հեռանալ նրանցից, ձեռքումդ զէնքդ պատրաստ բռնած, միշտ սպասելով յարձակման կամ դաւաճանութեան։

Ահա Խադդան—կէս ճանապարհն է։ Էշերի փալանը վեր առած, կատարեցին կէս գիշերուան աղօթքը և ճանապարհորդներին կազդուրելու համար պատրաստեցաւ դմակի եղով ձուածեղ։ Հասարակաց սեղանին մասնակցում են և՛ իշապանները, որոնք ամեն րոպէ վեր են կենում մի բուռ լոբի տալու էշերին, բայց գլխաւորապէս աչք ածելու դրացիներին, որոնք նոյնպէս իջեւանած են նոյն քարվանսարայում։ Այս դրացիների կերպարանքներն այնքան կասկածելի երևեցան իշապաններին, որ շուտով փալանեցին անասուններին և բեռնաւորելով շտապով ճանապարհ ընկան, առանց միջոց տալու փոքր ինչ հանգստանալու։

Վերջապէս հանգիստ են առնում մի տեղում, որի անունը չէ յիշում ճանապարհորդը։ Ճանապարհորդները փաթաթուած բրդեայ վերմակով պառկում են գետնին և քնում, բացի փրանսիայեցից, որ գրեթէ բոլորովին մերկ դողում է հարաւային գիշերի սաստիկ ցրտից, որ ցերեկուայ անտանելի շոգից յետ աւելի զգալի է լինում։

Լուսադէմին ուխտաւորները հասան սուրբ երկրի սահմանին, որ որոշուած է երկու քարեայ սիւներով, ագարակատան մեծ դռների նման։ Այս սահմանից դէնը բնաւ որս չէ լինում, որովհետև արգելուած է վայրի կենդանիներին սպանել։ Ճանապարհին լորերի ու անապատի սափակների հոյլերը վխտում են ու այնքան ընտելացել մարդոց, որ չեն թռչում, այլ ծանրաշարժութեամբ ճանապարհ են տալիս կարաւաններին, այստեղ երևում են անթիւ աղաւնիներ, որոնք պտըտում են անցորդի գլխին և համարձակ իջնում են էշերի ոտների տակ։ Մեքքայի բնակիչները աղաւնին սուրբ թռչուն են համարում և նրանց ոտքի տակ գցելը, թէկուզ ակամայ, գրեթէ սրբապղծութիւն է դրանց աչքում, որ կարող է ճանապարհորդի համար սոսկալի հետևանքներ ունենալ։

Ճանապարհը շուռ տալով ուխտաւորները անակնկալ կերպով մտնում են սուրբ քաղաքն, որ երկու լեռների մէջ է։ Քաղաքի մօտիկութեան ոչ մի նշան չէ երևում և ճանապարհորդները նրա փողոցներում միայն իմանում են որ իրանց ուղևորութիւնը վերջացել է։ Փողոցները միակերպ ձգվում են մինչև մեծ մզկիթն, որ խորհրդաւոր կերպով ծածկուած է քաղաքի խորքում, ամենացածր տեղում, ինչպէս ձուն բնի մէջ։

Մետուաֆ Աբդերրահման-բու-Չենաքն ընդունում է ուխտաւորներին և առաջնորդում դէպի սուրբ Խարամը, Մեքքայի միակ և մեծ մզկիթը։ Մետուաֆ-արաբերէն պտտեցնող է նշանակում և մի տեսակ հոգևորական պաշտօնական անձն է. նրա պարտաւորութիւնն է նորեկ ուխտաւորների խրատտուն լինել, շրջեցնել նրանց Քաաբայի, շուրջը, կատարելով Տաւաֆ կոչուող ծէսը, իր երկրացիների թարգման լինել, հոգալ նրանց բնակարանն ու պիտոյքը, համեմատ նրանց աստիճանին և կարողութեան։ Մեքքայում կան մահմեդական ամեն ազգերի և լեզուների համար մետուաֆներ։

—

Քաաբան որ հոյակապ կերպով պատած է սև թանկագին վարագոյրներով, մարգարէի գերեզմանը չէ, ինչպէս շատերը կարծում են։ Մահմեդի գերեզմանը Մեդինայումն է։ Քաաբան մահմեդականների համար «Աստուծոյ տունն է» (Բիտ Ալլահա) երկրիս վրայ։

Նոր ուխտաւորներին իսկոյն մետուաֆը բացատրում է և ասում.

Եղբայր, չկարծես թէ դու պէտք է աստուածացնես այս քարն և սրան պատող ոսկին ու մետաքսը։ Այստեղ է երկրիս կենտրոնը. Մահմեդական աշխարհի բոլոր աղօթքները այստեղ են հաւաքվում, որ բարձրանան երկինք։ Դու այստեղ աւելի մօտիկ ես Աստծուն և աւելի ոչինչ

Ժերվիէ Կուրտելլմօնն իր առաջին աղօթքի մասին Քաաբայի առաջ այսպէս է պատմում.

Առաւօտեան վեց ժամն է. Ամեն ինչ լուսաւորուած է արշալոյսի պարզ և վարդագոյն ճառագայթներով։ Մենք ջերմեռանդութեամբ նստում ենք տաճարի սալայատակի վրայ և մի քանի րոպէ կենտրոնացած լռութիւնից յետ սկսում ենք մեր առաջին աղօթքը. . . Մզկիթն արդէն լիքն է բազմութեամբ։ Բազմաթիւ ուղղափառներ պտըտում են Քաաբայի շուրջը լուռ, ինչպէս ստուերներ, բոկոտն սահելով մարմարեայ սալերի վրայ։

Մեր մետուաֆի ազգական Ահմեդ բու-Չենաքը բռնում է ձեռքիցս և եօթն անգամ պտտեցնում է Քաաբայի շուրջը ստիպելով բարձրաձայն ու երգելով կըրկնել նրա հետ մեր դաւանութեան աղօթքները։ Այս տուաֆի արարողութիւնն է։

Ապա նա ինձ առաջնորդում է Քաաբայի դէպի մի անկիւնը համբուրելու համար սև քարն, որ հագցրած է պատի մէջ մարդու բարձրութեամբ և շրջապատուած ձոյլ-արծաթեայ, 80 սանտիմետր լայնութիւն ունեցող ձուաձև շրջանակով։

Քարը համբուրելիս մարդ չէ զգում այն սառնութիւնն, որ զգալի է մարմարը համբուրելիս։ Ընդհակառակն նա մի փոքր անուշահոտ է թվում։ Մեծամասնութեան կարծիքով նա օդաքար է, իսկ ես կարծում եմ, որ նա հասարակ կայծքար է։ Համաձայն կանոնի ես երկու ձեռքով

հայերին յառաջ տանել իրանց ուղղութիւնը, ականցին հետզհետէ միմեանց հետ փոխադարձ առևտրական յարաբերութիւնների մէջ գտնուել, ընտելացան միմեանց սովորութիւնների և կենցաղավարական պայմանների հետ և շարունակեցին սերտ սիրով փոխանակութիւններ զանազան իրերի, դաշտային բերքերի ևայլն։ Բայց մի գլխաւոր ոյժ, որ անզգալի կերպով հովանաւորում էր նրանց վրայ, նուաճում էր նրանց վայրենի ձգտումները, մեղմացնում էր նրանց հոգեկան զգացմունքները, այդ անեղծ ոյժը հայերի քաղաքական ազդեցութիւնն էր, որ բոլորին իւր ճիրանների մէջ առնելով ստիպեց նրանց հանգիստ և խաղաղ ապրել, ենթարկելով հայ ժողովրդի համեստ բնաւորութեան և ընթացիկ կեանքի քաղաքական ուղղութեան, ահա, այդ ամենազօրեղ պատճառն էր, որ Սուրմալուայ գաւառում ապրող հայ, թուրք և քուրդ ազգաբնակութիւնները միմեանց հետ ապրում էին հաշտ և փոխադարձ համերաշխութեամբ։ Ո՞վ է կուլտուրական ազգը։

Եզիդի քուրքը կարօտ է առաջնորդի, որ ցեկավարէ նրան դէպի կրթութիւն, դէպի լուսաւոր աշխարհ։ Ուսումը յանցանք է համարւում եզիդի քրդերի կրօնաւորների մօտ և այդ նրա համար, որպէս զի ժողովրդի լուսաւորութեամբ չստոյ ասպարէզ դուրս չգան իրանց տգիտութիւնը, կեղծիքն ու խարդաւանանքը, բայց այդ նախապաշարմունքները բոլորովին ոտքի տակ տուեց եզիդիների պետի (էլ աղասի) որդին, Ոսոսը, որ Էջմիածնի ճեմարանի երրորդ դասընթացը աւարտելով՝ հեռացաւ ճեմարանից տկարութեան պատճառով, և այժմ ստանձնելով հօր պաշտօնը, իշխում է ընդհանուր եզիդի քուրդ ժողովրդին։

Այն տարրը, որ ընդունակ էր ամենաբարձր սխրագործութիւններ կատարելու, նա՝ որ ընդունակ էր ամենազարշելի յանցանքներ գործելու հասարակական կեանքի դէմ, գլուխը ոյժերի այդ զօրեղութիւնը, շատ կենդանի կերպով լուծվեց հասարակական քաղաքական ազդեցութեան ներգործող պայմանների մէջ։ Քաղաքական ազդեցութեան պատճառն էր, որ սմթափեցրեց լեռնական քրդին մահարեր հրացանը ցած դնել և ուսի վրայ կրել բահը. քաղաքական ազդեցութիւնն էր, որ ստիպեց լեռնական քրդին սուրը պատից կախ տալ և նրա փոխարէն գութանն ու մաճը ճանաչել, որ նրա կեանքի միակ փրկութիւնը պէտք է լինի։ Լեռնական եզիդին այժմ մաճը բռնած հերկում է գետինը, սերմ է ձգում և իւր արդար վաստակով պաշար պատրաստում, նա այլ ևս հակամէտ չէ ուրիշից յափշտակելու, նա ընդունակութիւն է ցոյց տալիս այժմ մտնել հասարակական քաղաքական

…

Նրբն առաւօտէն մինչև երեկոյ անգործ նստած՝ իրարու ցոյց կուտան ծալլելով այն ապրանքներն որք չեն քշուիր, և հնարած են սա նոր բանաձևը. «Եղբօր պէս բան մ'է. Չի բաժանուիր մենէ» ևայլն։

ՔՈՅՐ ԵՒ ԵՂԲԱՅՐ

—

Քոյր մանկական վիզը ճուկ՝
Գիշեր ցերէկ ակնդէտ
Սպասում էր, որ բացուի
Վարդ եղբայրը սիրաւէտ։

Բայց վարդն անխիտ անտեղեակ
Մանուշակի անձկանաց՝
Աչքը խփել կացել էր,
Կոկոնները հուպ տուած։

Այսպէս ամբողջ գիշերներ
Նա իւր վարդին կարօտած
Լաց էր լինում վշտագին,
Քնքոյշ աչքը չաղոտած։

Զուրկ պաշտպանի հովանուց՝
Թփերի մէջ թաքթաքուր,
Պահ էր մտնում ու ծածկվում
Հալածներից անմաքուր։

Եղբօր բացուելն ուշացաւ,
Հուպ կոկոնը մնաց փակ.
Սգւոր քոյրն էլ վայր չառաւ
Գլխի բօղը կապուտակ։

Վերջապէս մի առաւօտ
Հետ սոխակաց երգարան
Աչքը բացեց վարդիկը
Բայց ա՜խ... որքան անազան...։

Քոյրն եղբօրից ընդերկար
Կարօտակէզ երբ կացաւ՝
Ժոյժ չունեցաւ աւելի,
Թառամեցաւ ու անցաւ։

…

Իսկ չուրջը հորիզոնը փակած է բարձր լեռներով, որոնք կրկէթ է շրջապատում են քաղաքը ուղղահայեաց ժայռերով Փաբրիկ Ջիբէլ-Տարբի մզկիթը, կարծես դնված ոսկից ձուլած, արև …

Քրոջ անբաղդ օրհասին
Երբ վարդն եղաւ իրազեկ՝
Սկրծիցն ու ամօթից
Գոյնը եղաւ հրաշէկ։

Լուկիաս։

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆՈՒՂՂԱԿԻ ՋՈՒ Մ'ԱԼ

—

Հիւանդանոցը, ներքին հիւանդութեանց բաժնին մէջ, մահճակալին վրայ պառկած էր ծանր հիւանդ մը, երիտասարդ, դեռ ընչացքները վերին շրթունքը հազիւ հազ թեթև մը մրոտած։ Սո վորական մահճակալին երկարութիւնը չէր բաւեր անոր հասակին, այնպէս որ, ոտները դուրս ինկած էին։ Ձեռները անզիտակցաբար գալարած էր գլխուն շուրջ։ Նուրբ, աւելի մաշած դիմագծութիւն մը. աչքերը փակ էին։ Անկանոն, անվերջ խռկումով մը կըխակար անո։

Չորս օր էր, որ Արմենակը իր այդ հիւանդագին, յուսահատ վիճակին մէջ բերած էին հիւանդանոց՝ քանի մը իրեն հայրենակից բարեսիրտ գաղթականներ, կարող անկարող, իրենք իրենցմէ հոգալով հիւանդանոցի ծախսը, հէք տաբակիր երիտասարդին արդէն խուսափող, հեռացող կեանքը թերևս վերադարձնելու անյոյս յուսով մը։ Այո՛, իրենց գոյութիւնը պահպանող, ապրեցնող կաոր մը հացէն զրկուելու փափագած էին սիրով, սրովհետև ի զուր քանի մը ազգային հարուստներու դիմած էին, ի զո՜ւր, անոնք բան մը լսել, ընել չէին բարեհաճած. .։

Արմենակ նարնջի պէս դեղնած էր դէմքով, ամբողջ մարմնով։ Թապէլային վրայ դեռ գրուած չկար իր ենթարկուած հիւանդութեան կամ ախտին անունը, «ցաբեկը համբուն, գիշերը ողջոյն խելայեղօրէն՝ խռկումներէն զատ, յաճախ «հա՛, հա՛, հա՛» բացագանչութիւններ կ'արձակէր, մարած ձայնով մը։

Խելքը բնաւ գլուխը չէր, միշտ կըակներու զառանցանաց մէջ՝ մանաւանդ գիշերները Երբ կըխօսէին հետը, երբեմն անկապ, ցնդական պատասխաններ կուտար, երբեմն ալ բնա՛։ Տեղէն չէր կըրնար շարժիլ, ոչ ալ բան մը ուտել։ Դեղերով միայն կըսնանէր։

—

Նիւթական լաւ վիճակի տէր ընտանիք մը էին Սահակեաններ, Ա. քաղաքին մէջ։ Արմենակ իր ծնողաց միակ արու զաւակն էր։ Ունէր երկու քոյրեր, մին իրմէն մեծ։ Արմենակ կըյաճախէր վարժարան իր փոքր քրոջ հետ։ Տարի մ'էր մնացած, որ շրջանը պիտի աւարտէր, մտնէր առևտրական ասպարէզ, հօրը մօտ։

Անլուր, անգութ թաթով մը քաղաքը քանի մը օրուան մէջ աւերուած էր։ Բազմաթիւ զոհերու հետ գնացած էր նաև իր հայրը, որ շուկան իր վաճառատան մէջ, ամենուն պէս միամիտ նըստած առևտուրով կըզբաղէր։

Միայն հօրը զոհ գնալովը՝ ընտանեկան դժբաղդութիւնը չէր վերջացած։ Մայրը, մեծ քոյրը՝ վայրագ, գազանաբարոյ, արիւնարբու խուժանին առջև նախ պատուով, ապա հոգւով մահուան ճանկերուն մէջ հալածուած էին։ Շուկան՝ վաճառատունը միևնոյն վայրկեանին աւարի էր գնացած, ասեղ մը չմընալու պայմանաւ, ինչպէս տունը, ապա այրուած։

Հրաշքով մը ազատուած էր Արմենակ իր փոքրիկ քրոջը հետ։

Այն երկրին՝ «աճեցէք և բազմացարուք, և լցէք զերկիր» նախախնամութեան վճիռը բեկանող, խարտակող զարհուրելի թաթառը եկած՝ անցած էր այլ ևս...։ Կարգ մը գաղթողներու հետ, Արմենակն ալ միանալով անցած էր Կովկաս, քոյրը թողնելով այնտեղ։ Հեռացած էր ան վշտահար, սգաւոր սրտով, պատանեկան հասակին մէջ ամուր տպաւորուած վսեմ գաղափարով՝ դիմելով օտարութեան, իր եաև միայնոյ՝ անպաշտպան թշուառ քոյրը ապրեցնելու սուրբ մաքով պաշարուած, յափշտակուած։

Մօտ վեց ամսէ ի վեր, Պ. քաղաքին մէջ՝ իր հայրենակից տարագիրներուն հետ ապրելէ աւելի՝ մահուան կը քաշկռտուէր։ Գործ գտնելէ չէր յաջողած, գինքը այրող կրակէ բաղձանքները կարենալ կատարելու համար։ Նա՝ նոյն իսկ սիրով կամեցած էր ծառայութեան մտնել հայ հարուստի մը մօտ,—թէև ինքը դեռ քիչ ժամանակ առաջ, իբրև փոքրիկ տէր մը ծառայի հետ կըպարտէր միշտ, կըհրամայէր—զոհելով, խեղդելով իր մէջ՝ ամեն պատուասիրական զգացում. ազնիւ հոգի, ազոր ալ չէր կըցած յաջողել։ Այն մարդոց, որ դիմած էր ծառայութեան գործ խնդրելու, անոնք անտարբերութեամբ մը մերժած էին հէք տղեկին, իրենց ծանօթ երաշխաւոր մը ուզելով, իր հաւատարմաբար ծառայելուն վստահանալու համար։ Սոսկալի պահանջ էր այս. ... Ո՞վ կըճանչնար տեղացիներէն, ո՞վ կարող էր երաշխաւոր տալ։

Սիրտ պատռող նամակներ ալ հասած էին վերջերս՝ հայրենիքէն։

Ցաւած սևեռուն մտածկոտութիւնը, սակայն, հետզհետէ խամրեցուցած էր զինքը, զգալաբար՝ իր երիտասարդական թարմութիւնը, արիւնը, ոյժը տգրուկի պէս ծծած, քաշած էր, ապա՝ թողլով նիհար, աղաղուն, մորթ-ոսկոր մնացած մարմին մը։

Օր մ'ալ՝ բոլորովին հիւծած, սպառած, ինկած էր անկողին։ Հա՞ղ գլխին. խե՛ղճ տղայ, իր դեռարոյս կեանքի՝ այդ առաջին ու վերջին անկումն էր, որ ա՛լ ելլալիք չունէր....։

—

Այն օրը մինչև երեկոյ՝ արեւ չէր փայլած. տխուր, մութ երկինք մը կար։ Մութը վրայ առած էր. լոյսերը վառուած։ Մերթ ընդ մերթ խոշոր անձրևի կաթիլներ հիւանդանոցի երկար պատուհաններու ապակէ փեղկերուն կը զարնուէին շառաչաձայն։ Կատաղի հովը դուրսը կ'ոռնար, շրջակայ պարտէզներուն ծառերը անօգնական, ողբաձայն կըհառաչէին, կըճաթռտէին, կըսարսռէին, ստոիճանի գալարելով մինչև գետին։

Փէրշիկը մտնեցաւ Արմենակին, զգալով մը դող լեցնելու բերնէն վար։

Սակայն յանկարծ թևերը կախեց, մնաց մի քիչ պշուցեալ աչքերով. «Է՜հ, գործը կըվերջանայ» ըսաւ, ու, հիւանդապահներու յատուկ սառնարիւնութեամբ մը, քանի որ այդ տեսակ երևոյթներ գլխու մազերու չափ պատահած է առջևնին, անհոգութեամբ քաշուեցաւ միւս հիւանդին քով։

…

բռնեցի շրջանակն և շրթունքներս մօտեցրի սև քարին։ Ցետոյ մենք դուրս ենք գալիս մզկիթից և կատարում ենք առաջնորդի հետ միասին Սայի արարողութիւնը։ Մալեքիների կանոնով իմ իրհամը զցած է ուսիս իբրև փոզպատ։

Սայի արարողութիւնն այն է, որ երբեմն մարմնամարզական քայլով, երբեմն վազ ի վազ պէտք է եօթն անգամ անցնել Սաֆա և Մերուա կոչուած սրբազան կամարակապ սրահների մէջ եղած տարածութիւնն, որ մօտ 500 մետր է, այսինքն 4 քիլոմետր վազել, երգելով մետուաֆի հետ բառ առ բառ աղօթքներ ու մեղեդիներ։ Իւրաքանչիւր սրահի մօտ մի բոպէ կանգ են առնում աղօթք անելու համար, որ մինչ\ է տալիս փոքըր ինչ շունչ քաշել, յետ վազելու համար։

Մի տեսակ քնէածութիւն է գալիս ինձ վրայ, որ ինձ անզգայ է անում թէ յոգնածութեան, թէ սովի և թէ ծարաւի համար։ Իսկ երբ վազը վերջանալից յետոյ վերջին հանգստեան ժամանակ Մերուայի մօտ ածելին խորհրդաւոր կերպով շօշափում է քունքս, ես կրկին մտնում եմ սրբազան մզկիթն, ազահութեամբ խմում եմ մի գաւաթ սառը ջուր, որ ինձ տալիս է հոգևոր պաշտօնեաներից մէկը։ Առաջին գաւաթից յետոյ ինձ առաջարկում են երկրորդն, որ

Սեստրան, կնոչական աւելի զգայնոտ, գծոտ շարժումով մը եկաւ մօտ մահամերձին։

Երիտասարդը շունչը դժուարաւ կ'առնէր. հոգի կը քաշէր։ Հոգի տալու գերագոյն տագնապն էր, որ կը տիրապետէր վրան. անթարթ աչքերը ձեղունին յառած, ղալկացած շրթները կը դողային. կարծես դէմը սուրբի հոգեառ հրեշտակն էր, որուն հետ կը խօսէր անվրդով։

Մէկ, երկու, երեք երկար շունչ ալ, թեթև ընդհանուր ցնցում մը. ու ամեն բան վերջացաւ...։

Սեստրան, երեսը խաչակնքելով, մատներովը մեռելին սառած աչքերը փակեց, կզակն ալ լաթով մը կապեց գլխի գագաթին, բերանը գոցելու համար։ Ձեռները խաչաձև գետեղեց կուրծքին վրայ։

Թափելոն առին վար, նոյնպէս այն թուղթը, որ հիւանդին տաքութեան աստիճանը ցոյց կուտար։

Յետոյ երկու ծառաներ, անաէր մեռելը բիրտ շարժումներով մը սիր սաւաններուն մէջ փաթթելով, ծրարելով, մահճակալէն առին վար, դրին պատգարակի մը վրայ, ու արագ արագ քայլերով տարին նորս, դիանոց, ուրկէ ալ մոռացութեան վիհը...։

Աշխարհիս մէջ պլպլացող կանթեղ մը մարեցաւ, երկինքին վրայ ալ աստղ մը թաւ...։

Նշմարեց արդեօք նոյն բոպէին երկիրը Արմենակի՝ աշխարհի մէջ բոլորովին միայնակ, որը մնացած հէք քոյրը՝ երկինքին մէջ սուրացող այդ գուժկան աստղը...։

Ս. Մ. Ծոցիկեան։

Թիֆլիզ։

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՏԱՃԿԱՍՏԱՆ ԵՒ ՅՈՒՆԱՍՏԱՆ.— «Արձագանքի» անցեալ համարում հաղորդեցինք խաղաղութեան նախակարգ ծրագրի VI յօդուածի համառօտ բովանդակութիւնը, քաղելով «Polit Corresp».լրագրից։ «Times»ի թղթակիցը հետաքրքրական մանրամասնութիւններ հաղորդում է այս մասին։ Ինչպէս յայտնի է, համաձայն այդ ծրագրի, Տաճիկները խաղաղութեան դաշնագրի ստորագրուելուց յետ, համաձայնում են անմիջապէս Թեսալիայի հարաւային մասը մինչև Պենէոս գետը և Լարիսա—Վօլոյի երկաթուղու գիծը թողնելու։ Այսպէս նոցա ձեռքում կմնային Թեսալիայի գլխաւոր քաղաքները-Կալամբարան, Տրիկալան Տուրնաւոր, Լարիսան և Վօլօն։ Պատերազմական վարձատրութիւնը պիտի վճարուի երեք որոշեալ ժամանակամիջոցներում, ըստ ծրագրի։ Տուգանքի առաջին մասը ստանալից յետ Տաճիկները մաքրելու են երկիրը Պենէոսից դէպի հիւսիս, նորա ակունքից սկսած մինչև Գունիցա։ Երկրորդ մասը ստանալից յետ նորա մաքրելու են տարածութիւնը Գունիցայից մինչև Լարիսա, որ գետի կմնայ նոցա տիրապետութեան ներքոյ։ Վերջապէս տուգանքի երրորդ մասը վճարումից յետ տաճիկ զօրքերը կը թողուին Վօլօ, ուր նորա նաւեր կը մտնեն և բոլորովին կը մաքրեն Թեսալիան։ Տաճիկ զօրքերի աստիճանաբար Թեսալիայի նահանգը մաքրելու հետ, նոցա թողած տեղերը պիտի ուղարկուին յոյն վարչական իշխանութիւնները, փոքրաթիւ զօրքերով, որոնց բաւական կը համարուին կարգ պահպանելու համար։ VI յօդուածի խմբագրութեան գլխաւոր անհարմարութիւնն այն է, որ մինչև Թեսալիայի բոլորովին մաքրուելը Վօլօ քաղաքի՝ կը տանեն տաճիկներից կը դժուարացնէ փախստական բնակիչների վերադարձը Թեսալիա, իսկ երկրի գլխաւոր կենտրոնների՝ քաղաքների տաճիկների ձեռքում մնալը կը դժուարացնէ նաև հանգի վարչութեան կազմակերպութիւնը։

—Անգլիական լրագիրների ասելով, վերջին ժամանակ Կ. Պոլսում ձերբակալուած Հայերի ցուցմունքից կարելի է եզրակացնել, որ վերջին դաւադրութեան գլխաւորներն եղած են տասն և մի հոգի, որոնց 8 ը կալանաւորուած են, մէկը անձնասպանութեամբ վերջացրեց իր կեանքը, իսկ երկուսը մինչև հայժմ չեն գտնուած։

—„Standard“ ի Կ. Պոլսի թղթակիցը հաղորդում է, որ տաճիկ նախարարների խորհուրդը որոշել է ուղղել պետութեանց շրջաբերական, որով հրաւիրում է պետութեանց ուշադրութիւնը Կրետէում տիրող անիշխանութեան վրայ և առաջարկում է հեռացնել այնտեղից եւրոպական զօրքերն ու կազմել խառն յանձնաժողով, մասնակցութեամբ Դրան ներկայացուցչի, Կրետէի ապագայ կազմակերպութեան խնդիրը քննելու համար։ Նոյն լրագրի Կանէայի թղթակցի ասելով տաճիկները նորոգում են այնտեղ հին զօրանոցներն և նորերի կանգնման ծրագիրը կազմում։

—Ռէյտերի գործակալութեան Կանէայի թղթակիցը հաղորդում է, որ իբրև թէ Ջևվատ-փաշան այս օրերն գիտաւորութիւն է ունեցած Իպէդդին ամրոցը տնօրելու, բայց ապստամբների հրացանաձգութիւնը ստիպել է նրան Կանէա վերադառնալու։

ԿՐԵՏԷ.—Աւստրիական կայսերանաւանակոչութեան տօնի օրը եւրոպական զօրքերի զինուորական հանդէսին տաճիկ զօրքերի մասնակցին անխտիր պաշտօնութիւն գործեց կղզու քրիստոնեայ բնակիչների վրայ. ուստի և ծովակալները հաղորդեցին Ջևվատ-փաշային, որ այսուհետև տաճիկ զօրքերին թոյլ չէ տրվում մասնակցելու եւրոպական զօրքերի հանդէսներին, ինչպէս և եւրոպական զօրքերը չեն մասնակցիլ տաճիկ զօրքերի հանդէսին որ տեղի կունենայ սուլթանի գահակալութեան օրը։ Որովհետև մահմեդականները Կանդիայում և Հիերապե՛տրում փորձեցին խռնդոտ լինել աստուածպաշտութեան քրիստոնէական տաճարներում, Կանէայի եպիսկոպոսի բողոքի հիման վրայ ծովակալները յայտնեցին նահանգապետին, որ զինուորական միջոցներ ձեռք կառնուն եկեղեցիների պաշտպանութեան և աստուածպաշտութեան կանոնաւորապէս կատարման համար։

ՏԱՃԿԱՍՏԱՆ. — „Daily Telegraph“ին Կ Պոլսից հաղորդում են Անգլիայի նոր առաջարկութիւնը, որով Ինքը հայթայթում է Յունաստանին 4 միլիոն ֆունտ. միայն այն պայմանով, որ այդ գումարը վճարուի մաքսային արդիւնքից։ „Daily News“-ի Հռոմի թղթակիցը հաղորդում է, որ Իտալիան իւր կողմից մի առաջարկութիւն է արել, որ մի տեսակ իրաւախոհութիւն է և որ բաւարարութիւն կըտայ թէ Գերմանիային և թէ Անգլիային, որ պահանջում է հրաժարուելու բանակցութեանց մասնակցելուց, եթէ նորա առաջարկութիւնը Թեսալիան տաճիկ զօրքերից թափելու մասին կմերժուի։ Այս ծրագրով (Իտալիայի) պետութիւնները պէտք է գտնեն միջոց օգնելու Յունաստանին, որ սա կարողանայ վճարել պարտքերը, նոյնպէս պէտք է որոշեն յունական եկամուտից այն աղբիւրներն, որոնք նշանակած լինէին պատերազմական վարձատրութեան վճարման համար։ Միևնոյն ժամանակ պետութիւնը պէտք է համոզեն Դրան, որ վերադարձնէ Թեսալիան Յունաստանին։

Իտալիայի արտաքին գործոց նախարարութիւնը յոյս է տածում, որ այս ծրագիրն, առանց բանակցութիւնը ձգձգելու առիթ տալու, հիմն է տալիս պետութեանց տարաձայնութեանց առաջն առնելու։ Լուր կայ որ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը արդէն հաւանութիւն են տուած Իտալիայի առաջարկին։ Յոյս կայ, որ Գերմանիան ու Աւստրիան էլ կըյայտնեն իրանց համաձայնութիւնը։

Ժամանակաւոր խմբագիր՝ Գ. ՍԻՄԷՕՆԵԱՆՑ
Հրատարակիչ՝ ԱԲԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԱՌԱՋԻՆ ՄԱՍՆԱՒՈՐ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Բ. ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆԻ
(Կուկիա, Վօրօնցովի արձանի հանդէպ)

Հիւանդները ընդունում են ամեն օր, բացի կիրակի օրերից.

ԱՌԱՒՕՏՆԵՐԸ

Կ. Մ. ԶԻԿՈՎԱՆԻ—9—10 ժ. աչքի, ներքին և ներքոյին հ.

Զ. Ի. ԲԱՐԱՆՍԵԱՆՑ.—10—11 ժ. կանանց և երեխայոց հ.

Ա. Դ. ԿԱՐԱՊԵՏԵԱՆ—1—1½ ժ. ներքին և երեխայոց հ.

Ա. Գ. ԳՈՒՐԿՕ.—12½—1½ ժ. ներքին, ականջի, կոկորդի և միզասեռական հ.

ԵՐԵԿՈՆԵՐԸ

Ա. Մ. ՓՈՒՂԻՆԵԱՆ—6—7 ժ. ներքին, երեխայոց և ներքոյին հ.

Տ. Ի. ԲՈՒԴԵՆԿՕ հիւանդանոցումը քիմիական և խոշորացուցական հետազօտութիւն է անում մէզի, խխի, արեան, կաթի եայլն։

Վճար 50 կ. չքաւորները ծրի։ Համախորհրդի (կօնսիլիումի) և օպերացիայի համար առանձին։

Ի տեղի հիւանդանոցի վերատեսուչ՝
Բժ. Ա. Գ. ԳՈՒՐԿՕ։

ՎԻՐԱԲՈՒԺԱԿ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
Մշտական մահճակալների բաժնով
ԴՕՔՏ. Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎԻ
(ՆԱԽԿԻՆ ԴՕՔՏՈՐ ԿԱՐԱՊԵՏԵԱՆՑԻ)
Սօլօլակ, Դանովսկայա փողոց № 3,
Հիւանդների ընդունելութիւնն ամեն օր։

Ի. Մ. ՄԱՐԿՈԶՈՎ, ժամը 10—12 վեներական և սիֆիլիսի հիւանդութիւնների։

Փ. Վ. ԶՈՒԴՆՈՎՍԿԻ, ժամը 12½—2, վիրաբուժական և մէզի հիւանդութիւնների, (երկուշաբ., չորեքշ., ուրբաթ և կիրակէ օրերը)։

Ե. Գ. ԳԵԼՈՎ. ժամը 12½—1½. ջղային հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշաբ. և ուրբաթ օրերը)։

Կին-բժիշկ ԵԱ. Կ. ԿԱՐԳՈՎԻՉ, ժամը 10—11, մանկաբարձական և կանացի հիւանդութիւնների (երկուշաբ., չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Գ. Ի. ՕՍՏՐՈՎՍԿԻ ժամը 12—1, ներքին հիւանդութիւնների և ծաղկի պատուաստումն (երեքշաբ., հինգշաբ. և շաբաթ օրերը)։

Ն. Տ. ՄՈՒԼԻՆ, ժամը 12½—2, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնների (չորեքշ. և ուրբաթ օրերը)։

Ի. Ե. ԱՒԵՏԻՍԵԱՆ, ժամը 12—1, մանկաբարձական և կանանց հիւանդութեանց (երեքշ., հինգշ. և շաբաթ օրերը)։

Ա. Ե. ՖՕՆ-ԲՐԵՆՆԷՐ, ժամը 12—1, ատամնաբուժութեան, նաև ատամ մաքրելու, լցնելու և արհեստական ատամներ դնելու։

Ա. Ն. ԴԷՆՑ, դեղագործութեան մագիստրոս, մանրադիտակով քիմիական և բակտերիօլոգիական հետազօտութիւններ է կատարում — հետազօտութիւն մէզի, խխի, արեան, կաթի եայլն։

Հիւանդների ցանկութեամբ համախորհուրդ է լինում։ Բաժարանում կան բաժանմունքներ՝ մարմնամարզական — մասսաժի և ոսկրաբուժական։

Խորհրդի համար վճարը, ինչպէս նաև ծաղկի պատուաստման համար, 1 ռուբլի է։

Աղքատների համար ձրի է։ Համախորհուրդների, անդամահատութեան մասսաժի, մշտական մահճակալի, էլեկտրականութեան, լողարանի և ցնցուղի համար առանձին համաձայնութիւն պէտք է կայացնել։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԹԻՖԼԻԶԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ընդունում է իր վրայ աղբի փոսերը մաքրելու աշխատանքները, պնէվմատիկական ջրհանով, որ վառան ունի դաշտերի հոտը ոչնչացնելու համար։ Պատուէրներ տալողները պէտք է դիմեն քաղաքային վարչութեան շինութեանց բաժինը։ Գների մասին առանձին համաձայնութիւն կըկայացնուի։ (3-1)

ԽԻԹԱՐԵԱՆ ՔՈՅՐԵՐ
Իշխանութեան Թոյլտուութեամբ
Ընդունում են գիշերօթիկ
ԱՇԱԿԵՐՏՆԵՐ
7-ից 12 տարեկան
ՊԱՏՐԱՍՏՈՒՄ ԵՆ ԲՈԼՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ։
Հասցէն. Մասկովսկայա Բալկայից բարձրը, Իզմայլովսկայա փողոց, սեպհական տուն, № 2. (5—3)

Մամուլի տակից դուրս եկաւ և վաճառվում է «Կենտ. գրավաճառան.»
Վ. Փափազեանի Աղահր . . 15 կ.
Նոյն հեղինակի Տուրխոի յիշատակարանից . . . . 20 կ.
(10—4)

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Վ. ՓԱՓԱԶԵԱՆԻ
■ Ա Ն Յ Ա Գ Ը ■
(Փիլիսոփայական զրոյց)
ԳԻՆՆ Է 15 Կ.
(5—4)

ՆԵՐՍԻՍԵԱՆ ՀԱՅՈՑ հոգևոր դպրոցի հոգաբարձական խորհրդարանում օգոստոս ամսոյ 27-ին, երեկոյեան 8 ժամին, լինելու է աճուրդ (առանց կրկնաճրգի) կապալով տալու դպրոցի պատկանեալ 21 կրպակները, որոնք գտնվում են Ներսիսեան հին դպրոցի հանդէպ։ Պայմանաթուղթը կարելի է կարդալ հոգաբարձութեան գրասենեակում, ամեն օր, բացի կիրակէից և տօներից, առաւօտեան 10—ց 12 ժամն։ (3—3)

ԹԻՖԼԻԶԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՈՒՄ
բաժանորդագրութիւն է բացուած Մոսկվայում պ. Դր. ՋԱՆՇԵԱՆԻ խմբագրութեամբ տպագրւող ժողովածուի „БРАТСКАЯ ПОМОЩЪ пострадавшимъ въ Турціи Армянамъ“ (ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ Թիւրքիայում վնասուած հայերի) համար գինը սովոր. թղթի վրայ 4 ռ. չրեղ թղթի վրայ 5 ռուբլի։ (10—4)

ԵԼԻՄՏԻՑ ՆԱԽԱՐԱՐԻ ԹՈՅԼՏՈՒՈՒԹԵԱՄԲ ԲԱԳՒՈՒՄ ԲԱՑՈՒԱԾ ԵՆ
ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ
Ծրագիր. 1) Առևտրական թուարանութիւն. 2) Կրկնակի հաշուապահութիւն—նաւթային արդիւնաբերական գործարանային, առևտրական բանկային և այլն, 3) Առևտրական թղթակցութիւն, 4) Գեղագրութիւն։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐՆ ՍԿՍՎՈՒՄ ԵՆ ՕԳՈՍՏՈՍԻ 1-ԻՑ ԻՍԿ ՊԱՐԱՊՄՈՒՆՔՆԵՐԸ ՍԵՊՏԵՄԲ. 20-ԻՑ
Դասընթացների հիմնադիր Ա. ՏԷՐ-ԳԱՍՊԱՐԵԱՆ։
Վաճառվում է դասընթացների հիմնադրի նոր գիրքը.
«Նաւթային արդիւնաբ. գործարանային համառօտ հաշուապահութիւն»
ԳԻՆՆ Է 1 ՌՈՒԲԼԻ (20—11)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ու ՊԱՆՍԻՈՆ
Պ. Յ. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆԻ
(ԳՈՅՈՒԹԵԱՆ Ѵ-ՐԴ ՏԱՐԻՆ)
Աշակերտները նախապատրաստվում են մտնելու համար բոլոր կառավարչական միջնակարգ դպրոցների ստորին դասարանները։ Ուսումնարանում աւանդվում է նաև ՖՐԱՆՍԵՐԷՆ ԼԵԶՈՒ (տեսական և գործնական), փորձուած վարժուհի—ֆրանսուհու ղեկավարութեամբ։ Ուսումը կըսկսուի սեպտեմբերի 1-ին։
(10—5)

ԼՈՒՍԱՅԱԾ և ԳԶԱԾ ԲՈՒՐԴ
Օթոցների, վերմակների
ԵՒ ԸՆՏԱՆԵԿԱՆ ԱՅԼ ՊԷՏՔԵՐԻ ՀԱՄԱՐ
ՔԻՄԻԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ՄԱՔՐԱԾ ԵՒ ՊԱՏՐԱՍՏԱԾ
ԱԼ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ ԵՒ ԵՐՈՒԱՆԴ ՄԱՆԴԻՆԵԱՆՑԻ
ԾՈՎԵԾԱՐԺ ԼՈՒՍԱՅԱՐԱՆՈՒՄ
Ցանկացողները կարող են դիմել Միքայէլեան փողոց, Ալ. ԹՈՒՄԱՆԵԱՆՑԻ ծխախոտի խանութը, (ոչ հեռու Վօրօնցովի արձանից)։ (50—50)
Հեռախօս № 168.

ՄԱՍՆԱՒՈՐ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ
ՕՐ. Ե. ՅՈՎՀԱՆՋԱՆԵԱՆԻ
Տեղափոխուեց Սաղօվայա և Վելեամինովսկայա փողոցների անկիւն տուն Օհանեանի։
Ընդունվում են երկու սեռի մանուկներ և պատրաստվում գիմնազիաներ, Ռէալական և այլ Պետական դպրոցները մտնելու համար։
ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ԱՄԵՆԱՅՆ ՕՐ, (5—1)



Bateaux a vapeur Français „N. PAQUET ET Cie“
Ֆրանսիական շոգենաւային ընկերութիւն
„Ն. ՊԱԿԷ ԵՒ ԸՆԿ.“
Կանոնաւոր և ուղղակի նաւագնացութիւն կըլինի ՄԱՐՍԷԼԻՑ ԲԱԹՈՒՄ չորեքշաբթի օրերը, երկու շաբաթը մի անգամ, սկիզբը յունվարի 29/10-ի չորեքշաբթիից, և
ԲԱԹՈՒՄԻՑ ԴԷՊԻ ՄԱՐՍԷԼ՝ ՏՐԱՊԻԶՈՆԻ, ՍԱՄՍՈՆԻ ԵՒ Կ. ՊՈԼՍԻ ՎՐԱՅՈՎ
Մեկնում է Բաթումից չորեքշաբթի, սեպտեմ. 3-15 ԱՆԱՏՕԼԻ շոգենաւը, նաւապետն է ԲԻԱՆԿԻ,
Հինգշաբթի 18-30 սեպտ. ԼԱ ԳՕԼ շոգենաւը, նաւապետն է ԼԱԳԻԷ (մտնում է Կ. Պոլիս, Մարսէլ, Հավր, Դիւնկիրհէն, Անտվերպէն և այլն.
և այսպէս երկու շաբաթը մի անգամ, չորեքշաբթի օրերը, երեկ. 4 ժամին Բաթումից—Փարիզ ուղղակի հաղորդակցութեան տոմսակներ, գինը սովորականից պակաս է լինում։
Ապրանքների և ճանապարհորդների մասին պէտք եղած տեղեկութիւններ ստանալու համար թող բարեհաճեն դիմել ընկերութեան գործակատարներին
Բաթումում.—Վիկտոր դ'Արնոյին, Նաբերեժնայա։
Թիֆլիզում.—Պ. Օ. Գ. Բարեկենդանեանին, Սիօնի փողոց, նախկին Արծրունու քարվանսարա։
Բագւում.—Պ. Ս. Դիլղարեանին, Կոլիւբակինի հրապարակ։
Նովօրօսիյսկում.—պ. Մելխիօր Հերշենրօդերին։ (20—18)

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ-ՊԱՆՍԻՈՆ
Տէր-Յովհաննիսեանի
(Սօլօլակ, Սադօվայա փողոց, տուն № 46, Տէր-Մելիքսէթեանի)
Աշակերտների ընդունելութիւնն սկսվում է օգոստոսի 20-ից, իսկ ուսումը սեպտեմբերի 1-ից։ 15 —6)

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԱԲՐԱՀԱՄԵԱՆ
Հեղինակ Ձեռնարկի առևտրական և գործարն. հաշուապահութեան
ՈՒՍՈՒՑԱՆՈՒՄ Է ԵՒ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ Է
երկու սեռի անձանց, 4 ամսուայ ընթացքում, հաշուապահութիւն գործնականապէս, երաշխաւորելով, և եղած դէպքերում յանձն է առնում պաշտօնի առաջարկել։
ՊԱՐԱՊՄՈՒՆՔԻ ԱՌԱՐԿԱՆԵՐՆ ԵՆ
ա) Կրկնակի իտալական հաշուապահութիւն ըստ ամենայն առևտրական ճիւղերի, հանդերձ նաւթային արդիւնաբերական և կերպասինի գործարանական հաշուեխոյզութեան։
բ) Առևտրական թուարանութիւն։
գ) Առևտրական նամակագրութիւն։
դ) Գեղագրութիւն և ամենայնատ ձեռքերի ուղղութիւն։
Պարապմունքներն սկսուելու են սեպտեմբերի 15-ից ճաշից յետոյ և պարբերաբար շարունակուելու են իւրաքանչիւր 2ՈՐՍ ամսից յետոյ։
Ցանկացողները թող դիմեն գրաւոր կամ անձամբ 3 ժամից մինչև 6 ժամ երեկոյեան, ՍՕԼՕԼԱԿ, Սադօվայեա փողոց, տուն Մարգարովի, № 27։
Վերոյիշեալ հաշուապահութեան ձեռնարկը ծախվում է Թիֆլիզի և Ռուսաստանի բոլոր յայտնի գրավաճառանոցներում։ Գինն է 3 ռուբլի 50 կոպէկ։
Օտարաքաղաքացիները գիրքը գնելու համար կարող են դիմել հեղինակին, առանց պօստայի ծախս վճարելու։ (15—14)

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
„ԵԱԿՕՐ“
Բարձրագոյն հաստատուած 1872 թուին Մոսկուայում
Թիֆլիզի գլխաւոր գործակալութիւնն ընդունում է
ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
ամեն տեսակ անշարժ և շարժական կայքերի
ԿԵԱՆՔԻ ԵՒ ԴՐԱՄԱԳԼՈՒԽՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ
առանձին ձեռնտու պայմաններով, արտօնութիւններով, աշխատանքի անընդունակ դառնալու դէպքում. ապահովագրուողները մասնակից են ընկերութեան օգուտներին։
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԴԺԲԱԽՏ ԴԷՊՔԵՐԻՑ
ծառայողների և գործարանական բանուորների և մասնաւոր անձանց ապահովագրութիւն։
ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹԻՒՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՈՒԹԵԱՆ
ծովով, գետերով և ցամաքային ճանապարհներով. ապահովագրութիւն շոգենաւերի և նաւերի։
Ապահովագրութեան համար յայտարարութիւններն ընդունվում են և ամեն տեսակ տեղեկութիւններ և բացատրութիւններ հաղորդվում են ընկերութեան գլխաւոր գործակալ ԱԼԷՔՍԱՆԴՐ ԳՐԻԳՈՐԵՎԻՉ ՍԵՐԳԷԵՎԻ գրասենեակում, Երևանեան հրապարակի վրայ, տուն իշխ. Ցիցիանովի, № 2.

ԱՌԱՆՁԻՆ ԳՐՔՈՎ ԼՈՅՍ ՏԵՍԱՆ
ԳԷՈՐԳ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆՑԻ
ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ
կարելի է ստանալ «Կենտրոնական գրավաճառանոցում»
Գինն է 1 ռ., ճան. ծախ. 1 ռ. 20 կ.
10 օրինակից աւելի պահանջողները ճանապարհածախս չեն վճարում և դիմում են պ. Մնացական Մարտիրոսեանցի տպարանը, Միքայէլեան փողոց, № 81։ (5—4)